

## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի Խորոնք համայնքի ղեկավարի՝  
2018 թվականի ընթացքում կատարած աշխատանքների տարեկան  
հաշվետվության

2019 թվականի փետրվարի 04 -ին կայացավ ՀՀ Արմավիրի մարզի Խորոնք համայնքի ղեկավարի՝ 2018 թվականի տարեկան հաշվետվությունը :

Հաշվետվությանը ներկա էին ՀՀ Արմավիրի մարզպետարանի ՏԻՄ և համայնքային ծառայության հարցերի բաժնի պետ Գ.Հովհաննիսյանը, Խորոնք համայնքի ավագանու անդամներ՝ Նշան Ասատրյանը, Նորիկ Կարապետյանը, Էդգար Խաչատրյանը, Արման Գրիգորյանը, Արտակ Խաչատրյանը, Կամո Կարապետյանը, Վլադիկ Ամիրյանը և Խորոնք համայնքի 35 բնակիչներ: Խորոնք համայնքի ղեկավար Սարգիս Նահապետյանն իր զեկույցով հանդես եկավ և մանրամասնորեն ներկայացրեց 2018 թվականի տարեկան հաշվետվությունը: Խորոնք համայնքի ավագանու անդամները և բնակիչները շնորհակալություն հայտնեցին գյուղապետին ինչպես 2018 թվականի ընթացքում կատարված աշխատանքների համար:

Ավագանու անդամ Վ. Ամիրյանը անդրադարձավ համայնքի բնակիչներին լիովին խմելու ջրով ապահովելու ,ինչպես նաև բնակավայրի սանիտարական վիճակի հիմնախնդիրների վերջնական լուծմանը :

Ի պատասխան ավագանու անդամ Վ. Ամիրյանի առաջադրած հիմնախնդիրին՝ համայնքի ղեկավար Ս. Նահապետյանը պարզորոշ բացատրեց, որ այդ հիմնախնդիրների լուծումներն ընթացքի մեջ են, մինչև մայիս ամիսը հիմնովին կլուծվի:

Բնակիչներից մի քանիսի կողմից հարց բարձրացվեց պարարտանյութեր տրամադրելու վերաբերյալ: Հարցին պատասխանեց Գ.Հովհաննիսյանը: Ըստ նրա՝ պարարտանյութ կա, կարող եք հերթագրվել՝ 6700 դրամով, ժողովրդին կհասնի ժամանակին և կբաշխվի ըստ հողակտորների չափաքանակի :

Ավագանու անդամ Նշան Ասատրյանը կրկին առաջ քաշեց միջնակարգ դպրոցում սպորտդահլիճի կառուցման հարցը: Գ.Հովհաննիսյանը պատասխանեց, որ հետամուտ կլինի հարցի լուծմանը և հարցը կբարձրացնի Արմավիրի մարզպետարանում:

Բնակիչների կողմից հարց առաջադրվեց նաև այն մասին ,որ կենտրոնական ճանապարհի հիմնովին ասֆալտապատումն ընդգրկվի ծրագրի մեջ : Գ.Հովհաննիսյանը պատասխանեց, որ եթե անուշիկայում արդարև ծրագիր նախատեսվի, համայնքն անպայման կընդգրկվի ծրագրում:

Խորոնք համայնքի ղեկավար՝

**Արձանագրությունը կազմեց՝**

Աշխատակազմի քարտուղար՝

/Ս. Նահապետյան/

/Վ. Կարապետյան/